ՀՏԴ 32(479.243) Քաղաքագիտություն

Ալեքսանդր Մանասյան

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

(Ստատուս-քվոյից նահանջելու առաջարկության օրինակի վրա)

Որպես կանոն միջնորդները հակամարտող կողմերից պահանջում են չխորանալ պատմության մեջ: Սակայն Ղարաբաղյան հակամարտության դեպքում իրենք են առաջարկում հրաժարվել ստատուս-քվոյից և վերադառնալ անցյալ: ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների կողմից ներկայացված բոլոր փաստաթղթերում ենթադրվում է, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը պետք է տարածքներ հանձնի Ադրբեջանական Հանրապետությանը և վերադառնա նախկին ԼՂԻՄ-ի սահմաններին: Փաստորեն առաջարկվում է վերադառնալ գոյություն չունեցող ԽՍՀՄ-ի ու Խորհրդային Ադրբեջանի իրավաքաղաքական իրողություններին: Դա անհնար է նաև այն պատճառով, որ 1991-ին հենց Բաքուն է հրաժարվել լինել Խորհրդային Ադրբեջանի իրավահաջորդը: Ինչ վերաբերվում է տարածքային ամբողջականության և ժողովուրդների ազատ ինքնորոշման սկզբունքներին, որոնք դրված են կոնֆլիկտի կարգավորման հիմքում, ապա դրանք միայն հռչակվում են և չեն կապվում խնդրի կոնկրետ բովանդակության հետ:

Բանալի բառեր – կոնֆլիկտ, պատմական փաստարկ, իրավական փաստարկ, ղարաբաղյան կոնֆլիկտ, ժողովուրդների ազատ ինքնորոշում, տարածքային ամբողջականություն

Александр Манасян

ИСТОРИЯ И ПРАВО В ПЕРЕГОВОРНЫХ ПРОЦЕССАХ КАРАБАХСКОГО КОНФЛИКТА

Обычно посредники требуют от конфликтующих сторон не погружаться в историю. Однако в случае Карабахского конфликта они сами предлагают отказаться от статус-кво и вернуться в прошлое. Во всех документах, представленных Сопредседателями Минской группы ОБСЕ предполагается, что Нагорно-Карабахская Республика должна передать Азербайджану территории и вернуться к границам бывшего НКАО. Фактически предлагается «возвратиться» в несуществующее прошлое – в Советский Союз или в Советский Азербайджан, что принципиально невозможно в том числе по той причине, что Баку в 1991 году отказались от правопреемства Советского Азербайджана. Что касается принципов территориальной целостности и права народов на самоопределение, которые положены в основу урегулирования Карабахского конфликта, то они просто декларируются и не связываются с конкретным содержанием проблемы.

Ключевые слова: конфликт, статус-кво, исторические аргументы, правовые аргументы, право народов на свободное самоопределение, территориальная целостность

Alexander Manasyan

HISTORY AND LAW IN KARABAKH CONFLICT NEGOTIATION PROCESS

Mediators usually require the parties of conflict not to go deep into history. But in case of Nagorno-Kharabakh conflict they are offering to give up and return to the previous status quo. All documents presented by the OSCE Minsk Group presuppose that the Republic of Nagorno Karabakh must give back the territories of the Republic of Azerbaijan and to return to the borders of the former Nagorno Karabakh Autonomous Region. Actually ерун offer to return to a non-existent Soviet Union and the political realities of Soviet Azerbaijan. It is also impossible because in 1991 Baku refused to be the successor to the Soviet Azerbaijan. As for the peoples right to self-determination and the principle of territorial integrity principles that underlie the conflict settlement, it is a declaration of intent and not linked to the concrete content of the problem.

Keywords: conflict, status quo, historical arguments, legal arguments, the right of peoples to self-determination, territorial integrity

"Քաղաքականությունը պատմության հետ գործ չունի". սա այն թևավոր արտահայտությունն է, որով պարզ ձևակերպմամբ լայն հանրությանը հաղորդում են ակնհայտ այն իրողությունը, որ հակամարտությունների կարգավորման գործընթացներում քաղաքականությունը գերիշխում է իրավունքի և, առավել ևս, պատմության վրա: Միջնորդները որպես կանոն բանակցող կողմերին խորհուրդ են տալիս "չսուզվել պատմության խորքերը", քանի որ պատմական փաստարկները բանակցությունները զրկում են կառուցողական ոգուց[1]:

[1] Դարտմուտյան խորհրդաժողովի ամերիկյան համանախագահ, փորձառու դիվանագետ Հարոլդ Սոնդերսը այդ հանգամանքը բացատրել է նույն պարզությամբ՝ համոզելով, որ պատմական փաստարկները անարդյունավետ են, քանի որ հեռացնում են բանակցողներին կարգավորման բուն խնդրից և այնքան, որ դրանցով տարված նրանք

Սակայն կողմերին պատմական և իրավական փաստարկներից հեռու պահելը միայն բանակցային գործընթացի արդյունավետության պրագմատիկ նկատառումներով չի արվում: Միջնորդները, որ սովորաբար անտարբեր չեն հակամարտության կարգավորման (կամ չկարգավորման) հարցերում, ձգտում են իրենց չսահմանափակել պատմական ու նաև իրավական այնպիսի փաստարկներով ու կանխապայմաններով, որոնք կարող են խանգարել տվյալ վեճից օգտվելուն: Նրանցից ամեն մեկը փորձում է հակամարտության կարգավորումը տեղափոխել իր ազգային շահերի դաշտ, և դա անխուսափելիորեն տանում է քննարկվող խնդրի քաղաքականացմանը: Բնական է, որ նրանք իրենց այդ մտադրությունների մասին չեն բարձրաձայնում: Պրագմատիկ կեցվածքով նրանք կողմերին առաջարկում են ձևակերպել իրողությունները այնպես, ինչպես դրանք կան որպես առկա փաստեր և այնուհետև ձևակերպել իրենց պահանջները՝ փոխզիջումային տեխնոլոգիաներով համաձայնության հասնելու համար: Միով բանիվ, առաջարկում են առաջնորդվել մի սկզբունքով, որ դիվանագիտության մեջ հայտնի է նաև որպես իրողությունների հետ հաշվի նստելու սկզբունք: Հաշվի նստել իրողությունների հետ՝ նշանակում է նայել առաջ, չվերադառնալ անցյալին, չդիմել պատմական բնույթի փաստարկներին:

Թվում է՝ ամեն ինչ պարզ է ասված և թվում է, թե միջնորդներն ու կողմերը պետք է հետևեն այդ պայմաններին: Սակայն բանակցություն կոչվածը տեխնոլոգիական, տեղեկատվական ու հոգեբանական իմաստներով բարդ մի գործընթաց է, որտեղ խաղի ազդարարված կանոնները շրջանցելու բազում նրբագեղ հնարավորություններ կան: Դա յուրօրինակ մարտ է, որի մասնակիցները սեղանի շուրջ նստում են այն շահելու վճռականությամբ՝ խաղի կանոնները տարբեր հնարքներով շրջանցելու միջոցով: Ղարաբաղյան հակամարտության կարգավորման շուրջ բանակցությունները նման բազմաթիվ օրինակներ են տրամադրում: Դրանցից ամենից ակնառուն այն է, որ հակառակ անցյալի մեջ չխորանալու հորդորին համանախագահները իրենք են կողմերին առաջարկում անտեսել հակամարտության արդյունքները, հրաժարվել ստատուս-քվոյից և վերադառնալ անցյալ:

Մինչ այդ առաջարկի մանրամասների ու էության մասին խոսելը շեշտել է պետք կարևոր այն հանգամանքը, որ հակառակ պատմության մեջ չսուզվելու միջնորդների հորդորներին բանակցային գործընթացից այն իսպառ դուրս մղելը անհնար (իսկ հաճախ նաև սկզբունքորեն սխալ) ձեռնարկ է: Այս կամ այն կերպ պատմությունը և իրավունքը միշտ «ներկա են սեղանի շուրջ» որպես բանակցային գործընթացի անբաժանելի (իսկ հաճախ նաև որպես վճռական ձայն ունեցող) մասնակիցներ: Դուրս մղիր պատմությունը բանակցային գործընթացից դռնով, այն, ինչպես ասում են, ներս է կմտնի պատուհանով: Նույնը վերաբերվում է իրավական փաստարկներին: Բանն այն է, որ թե կողմերը, թե միջնորդները այսպես թե այնպես, բաց տեքստով կամ լռելյան ելնում են կոնֆլիկտի որոշակի ըմբռնումից: Իսկ դա արդեն դեպի անցյալն ուղղված հայացք, անցյալից եկող որոշակի պատկերացում է կոնֆլիկտի բնույթի ու առարկայի մասին: Եթե միջնորդները կողմերից մեկին համառորեն հորդորում են “ետ տալ գրաված տարածքները” կամ “վերականգնել նախկին ստատուս-քվոն”, ապա այդպիսի հետհայաց հորդոր-պահանջները անհրաժեշտաբար ենթադրում են հակամարտության բնույթի ու պատմության մասին որոշակի պատկերացում: Դրանք կասկածի տեղ չեն թողնում, որ հակամարտության պատմությունը (ինչպես նաև իրավունքը) տարբեր ձևերով «ներկայանում են» բանակցային գործընթաց և հուշում, որ պետք է խոսել ոչ թե բանակցային գործընթացում դրանց բացակայության, այլ այն մասին, թե ինչ ձևերով, ինչ դիմակների տակ ու ինչպիսի «ձևաչափերով» են դրանք ներկա կոնֆլիտի կարգավորման գործընթացներում, թե ինչ ձևերով են դրանք շրջանցվում կամ գրանցվում հակամարտության կարգավորման բանակցային օրակարգում, ինչ հնարքներով են դրանք քաղաքականացվում: Թեման «բացելու» ընթացքում մենք դիմելու ենք ոչ միայն զուտ տեսական-տրամաբանական փաստարկների, այլև այն փորձին, որ մենք ձեռք ենք բերել Ղարաբաղյան հակամարտության կարգավորմանը նվիրված Դարտմուտյան խորհրդաժողովի ընթացքում[1]:

Ստորև, ինչպես նշվեց վերը, մեր դիտարկման նյութը ստատուս-քվոյից նահանջելու այն պահանջը կլինի, որ Մինսկի խումբը ներկայացնում է հակամարտության հիմնական կողմերից մեկին՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը:

«Ստատու-քվոն դարձել է անտանելի», «Ստատուս-քվոն այլևս անհանդուրժելի է» ձևակերպումները այնքան են կրկնվել ԱՄՆ-ից Մինսկի խմբի համանախագահ Ջեյմս Ուորլիկի թվիթերյան էջում, որ հատուկ հղումների կարիք

կարող են հասնել անցյալի այնպիսի հեռուներ, որ ստիպված կլինեն վիճել այն մասին, թե ով է առաջինը իջել ծառից և պատրաստել առաջին նետ-աղեղը: Համոզիչ փաստարկ է:

[1] Դարտմուտյան խորհրդաժողովը հիմնադրել են Քիսինջերը (ԱՄՆ) և Պրիմակովը (ԽՍՀՄ) դեռևս անցյալ դարի 60-ական թվականներին որպես երկու գերտերությունների հասարակական երկխոսության հարթակ: ԽՍՀՄ-ի լուծարումից հետո այն պահպանվել է որպես ժողովրդական դիվանագիտության գործիքներով հետխորհրդային տարածքներում հակամարտությունների կարգավորման ռուս-ամերիկյան խորհրդաժողով: Մինչ 2001-ին Ղարաբաղյան հակամարտության կարգավորմամբ զբաղվելը Դարտմուտյան խորհրդաժողովը հաջողություն է արձանագրել Տաջիկստանում բորբոքված ներքաղաքական կոնֆլիկտի կարգավորման գործում: Խորհրդաժողովը Ղարաբաղյան հակամարտության թեմայով 2001-ի հոկտեմբերից, երբ մերձմոսկովյան Սնիգերի ավանում մեկնարկել է փորձագետների և հասարակական գործիչների Բաքու-Ստեփանակերտ-Երևան եռակողմ հանդիպումների շարքը, անց է կացրել տասնմեկ բանակցային հանդիպում, որի արդյունքում 2005 թ. տեղի ունեցած տասնմեկերորդ հանդիպման ժամանակ կողմերը տվել են իրենց համաձայնությունը Խորհրդաժողովի համանախագահներ Հարոլդ Սոնդերսի (ԱՄՆ) և Վիտալի Նաումկինի կազմած փաստաթղթին, որը ներկայացվել է հակամարտող կողմերի իշխանություններին //www.regnum.ru/news/561552.html): 2006 թ. Համանախագահները այցելել են Երևան, Ստեփանակերտ և Բաքու՝ ստանալու համար երեք մայրաքաղաքների պաշտոնական շրջանակների համաձայնությունը համատեղ ընդունված փաստաթուղթը հակամարտության կարգավորման հիմքում դնելու համար: Դարտմուտյան գործընթացը ընդհատվել է այն բանից հետո, երբ ադրբեջանական թիմը հրաժարվել է ներեղություն խնդրել կամ ափսոսանք հայտնել Գուրգեն Մարգարյանին քնած վիճակում կացնահարած Ռամիլ Սաֆարովն Բաքվում հերոսացնելու կապակցությամբ:

չունեն: Թե ինչ է հասկանում համանախագահը ստատուս-քվոյից նահանջելու իր պահանջներում, պարզ է դառնում այսպես կոչված *Մադրիդյան փաստաթղթից*, որի բոլոր տարբերակները ենթադրում են ԼՂՀ կողմից ազատագրված տարածքների խաղաղ հանձնում «տուժած կողմին» (ըստ փաստաթղթի հեղինակների՝ **օկուպացված տարածքների վերադարձ**) Ադրբեջանական Հանրապետությանը: Համանախագահները փաստորեն անտեսում են իրողությունների հետ հաշվի նստելու հայտնի պահանջը և բաց տեքստով առաջարկում են ետ պտտել պատմության անիվը: Հարց է ծագում՝ դեպի ո՞ր անցյալն են առաջակում նահանջել ԼՂՀ-ին:

Պարզվում է, որ դեռևս 1991-ին (իսկ գուցե և դրանից առաջ) Արևմուտքը ԽՍՀՄ մասնատման իր նախագծում նախատեսել էր, որ տրոհվող միջուկային գերտերության տարածքում նորանկախ պետությունները պիտի հռչակվեն և ճանաչվեն միութենական հանրապետությունների սահմաններում: Հնարավոր նախագծերի փաթեթում դա եղել է հզոր երկիրը կազմաքանդելու ամենահիրատեսական ու ամենից քիչ ծախսատար նախագիծը, որտեղ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզին հատկացվել է գործընթացի մեկնարկի պայթուցիկի դերը[1]: Այսօր Արևմուտքի քաղաքական այդ որոշմանը վերադառնալը, անկասկած վերադարձ է անցյալին[2]: Մեզ ըստ էության առաջարկում են վերադառնալ Խորհրդային Ադրբեջան:

Սակայն պարզվում է, որ պատմահրավական բնույթի այդ նահանջը կապված է անհաղթահարելի արգելքների հետ: Բանն այն է, որ այն Ադրբեջանը, ուր Մինսկի խումբը առաջարկում է վերադառնալ, գոյություն չունի: Խնդիրը միայն այն չէ, որ դա ենթադրում է վերադարձ արդեն գոյություն չունեցող Խորհրդային Միության իրավաքաղաքական իրողություններին, որոնց համակարգում գոյություն է ունեցել Խորհրդային Ադրբեջանը: Բանն այն է, որ մերօրյա Ադրբեջանական Հանրապետությունը 1991-ին հրաժարվել է ռուսական XI Կարմիր բանակի կողմից հիմնած Խորհրդային Ադրբեջանի իրավաքաղաքական ժառանգությունից և վերականգնել թուրքական բանակի կողմից հիմնված և 1918-1920 թթ. գոյություն ունեցած Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության պետականությունը: Ինչ վերաբերում է Խորհրդային Ադրբեջանին, ապա նա անհետացել է բացարձակ իմաստով՝ մահացել է առանց իրավահաջորդի: Ստացվում է, որ համանախագահները մեզ առաջարկում են վերադառնալ անհետ կորած, կարելի է ասել նաև Բաքվի համար գոյություն չունեցող անցյալ:

Ի տարբերություն համանախագահների, որոնք վերադառնում են "սովետական անցյալ," Բաքուն այդ դաշտը խախուտ համարելով իր համար, նախընտրել է վերադառնալ 1918-1920 թթ. իրավաքաղաքական իրողություններին: Նա ավելի խոր է սուզվում պատմության մեջ: Բայց պարզվում է, որ դա նոր գլխացավանք ու անհաղթահարելի արգելքներ է առաջ բերում միջնորդների համար: Բանն այն է, որ 1918-1920 թթ. ընդամենը 19 ամիս գոյատևած Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունը պատմական ասպարեզը լքել է առանց միջազգայնորեն ճանաչված կամ փաստորեն հաստատված սահմաններ ձեռք բերելու: Թուրքական բանակի կողմից հիմնած այդ պետությունը իր ծավալապաշտական նկրտումների պատճառով դե-յուրե ճանաչման չի արժանացել: Ավելին, պարզվում է, որ այդ արհեստածին պետությունը փաստացի ռազմաքաղաքական ու վարչական վերահսկողություն չի ունեցել իր կողմից հավակնվող տարածքների մեծ մասի վրա, այդ թվում և Լեռնային Ղարաբաղի վրա, որի ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարները այդ տարիներին երկրանասը բազմիցս հռչակել են Հայաստանի Հանրապետության անկապտելի մաս: Վերջին անգամ՝ 1920 թվականի ապրիլի 28-ին՝ Բաքվում խորհրդային կարգերի հաստատման օրը: Միջնորդները այդ մասին հրաշալի գիտեն և իհարկե գիտեն, որ Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունը իր մահկանացուն կնքել է առանց լեգիտիմ կամ փաստասի հաստատված սահմաններ ձեռք բերելու: Բայց միայն դա չէ անհարմարություն պատճառում Մինսկի խմբի համանախագահներին: Բանն այն է, որ Բաքվի այդ քայլը հակասում է ըստ միութենական հանրապետությունների ԽՍՀՄ կազմաքանդման Արևմուտքի ծրագրին, որին միջնորդները մինչ օրս հետևում են: Դրա համար էլ նա անտեսում է իր տեսակետից Բաքվի այդ հիմար քայլը և նախընտրում վերադառնալ 1920-1991 թթ. գոյություն ունեցած և անհետ (առանց իրավահաջորդի) կորած Խորհրդային Ադրբեջանի իրավաքաղաքական իրողություններին:

Բայց այստեղ էլ այլ խնդիրներ են ծագում: Պարզվում է, որ Բաքվի կողմից մերժվող խորհրդային անցյալ հնարավոր է վերադառնալ տարբեր կերպ:

Կարելի է, օրինակ, վերադառնալ 1920 թ. նոյեմբեր, երբ որպես ինքնիշխան պետություն ներկայացող (ԽՍՀՄ-ը դեռ կազմավորված չէր) Խորհրդային Ադրբեջանը Լեռնային Ղարաբաղը (ի դեպ նաև Նախիջևանը) ճանաչվել է Խորհրդային Հայաստանի անկապտելի մաս:

Կարելի է վերադառնալ 1920 թ. դեկտեմբեր, երբ դարձյալ մինչև ԽՍՀՄ կազմավորումը Խորհրադյան Ադրբեջանը Խորհրդային Հայաստանի անկապտելի մաս է ճանաչել Նախիջևանը և միաճամանակ ճանաչել Լեռնային Ղարաբաղի լիիրավ ինքնորոշման իրավունքը:

Կարելի է վերադառնալ 1921 թ. հունիսի 12-ը, երբ, չհանդիպելով Բաքվի առարկությանը և հիմնվելով Լեռնային Ղարաբաղի ժողովրդի բազմիցս արտահայտված կամարտահայտության վրա, Խորհրդային Հայաստանը Լեռնային Ղանաբաղը հռչակել է որպես իր անկապտելի մաս:

---

[1] Հիմնախնդրի այդ տեսանկյանը հեղինակը ավելի մանրամասն անդրադարձել է իր «Ղարաբաղյան հիմնախնդիրը ԽՍՀՄ տրոհման համատեքստում» հոդվածում ("Նորավանք", 2015, N 4, էջ 47-77):

[2] ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների կողմից առաջարկվող փաստաթղթերում դեպի անցյալ վերադառնալու կողմնորոշման մասին քառօրյա պատերազմից հետո Ստեփանակերտում իր տեսակետն է արտահայտել ԼՂՀ հռչակման 25-րդ տարեդարձի կապակցությամբ Արցախ այցելած ՀՀ-ում Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Հանս-Յոխեն Շմիդթը, ով ընդգծել է, որ Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործընթացում վերադարձ անցյալին չի կարող լինել:

Կարելի է վերադառնալ 1921 թ. հուլիսի 4, երբ Ռուսաստանի կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցության Կովկասյան բյուրոն՝ երրորդ երկրի կուսակցական մարմինը, որ տարածքային հարցեր լուծելու իրավասություններ չի ունեցել, Բաքվի պահանջով քննարկել է Ղարաբաղյան հարցը և ճանաչել արդեն Խորհրդային Հայաստանի մաս հռչակված Լեռնային Ղարաբաղի ժողովրդի իրավունքը հանրաքվեով վերահաստատել երկրամասը Հայաստանի անկապտելի մաս լինելու մասին բազմիցս արտահայտած իր կամքը::

Կարելի է վերադառնալ 1921 թ. հուլիսի 5, երբ նույն Կովբյուրոն Մոսկվայից հատուկ հանձնարարությամբ այդ նիստին գործուղված Ստալինը նիստի մասնակիցներին կարդացել է Կենտրոնի՝ Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Ադրբեջանի սահմանները մտցնելու մասին որոշումը և այն համարել ընդունված առանց քննարկման ու քվերակության: Ըստ էության այդ որոշումը չի ընդունվել:

Կարելի է վերադառնալ 1989 թ. հունվար, երբ ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների կողմից հատուկ կառավարման կարգավիճակ է տրվել ԼՂԻՄ-ին, դե-ֆակտո դուրս բերելով մարզը Բաքվի ենթակայությունից:

Վերջապես կարելի է վերադառնալ 1991 թ. սեպտեմբեր, երբ միանգամայն լեգիտիմ ձևով Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը հռչակվել է Ադրբեջանական Հանրապետությանը չպատկանող տարածքներում այդ թվում և ի հետևանս Բաքվի կողմից Խորհրդային Ադրբեջանի իրավահաջորդությունից հրաժարվելու ակտի:

Ինչպես տեսնում ենք, առանց իրավահաջորդի պատմությունը լքած Խորհրդային Ադրբեջան վերադառնալու բազմաթիվ տարբերակներ կան: Սակայն Մինսկի խմբի համանախագահները վերադարձել են 1923 թվական, երբ Բաքուն հատուկ դեկրետով Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը (ԼՂԻՄ) հիմնել է Լեռնային Ղարաբաղի մի մասի վրա (առանց հանրաքվե անցկացնելու)[1]: Մնացյալ պատմական հանգրվանները, որոնք իրավունքի տեսակետից ավելի՝ հստակ հիմքեր են տրամադրում, անտեսվում են:

Կարող են ասել՝ հենց այն փաստը, որ խոշոր տերությունները կողմերին առաջարկում են վերադառնալ "անհետ կորած անցյալ", խոսում է այն մասին, որ նրանք թքած ունեն կողմերի պատմական, այնպես էլ նրանց "դեռևս ողջ-առողջ" իրավական փաստարկների վրա: Եվ դա, կարող են ասել, հենց ապացույցն է այն բանի, որ քաղաքականությունը գործ չունի պատմության ու միջազգային իրավունքի հետ և որ անշահախնդիր հաշտարարների սքեմով ներկայացող Միացյալ Նահանգները, Ռուսաստանը և Եվրոպայի անունից խոսող Ֆրանսիան իրականում Ղարաբաղյան հակամարտության կարգավորման ռինգում ներկա են որպես սեփական շահեր հետապնդող կողմեր:

Այսպիսի հարցադրմամբ հակամարտության կարգավորման գործընթացում պատմական ու իրավական փաստարկների ներգավվածության հարցը շրջվում է դեպի խոշոր տերությունների վարքը այդ գործընթացում: Ակնհայտ է, որ գլոբալ դերակատարների պահվածքը կոնֆլիկտից կոնֆլիկտ փոխվում է: Ոչ մի կոնֆլիկտ նման չէ մյուսին: Ամեն առանձին դեպքում կատարվում են տվյալ հիմնախնդրին ու իրավիճակին համապատասխանող քայլեր: Գործելակերպի անփոփոխ, կանխապես հայտնի քայլեր ու կանոններ չկան, բացի այն, որ բոլոր իրավիճակներում ամեն մեկը փորձում է իր համար շահեկան արդյունքների հասնել: Այս պարագան է հենց դառնում ԵԱՀԿ շրջանակներում Ղարաբաղյան հակամարտության կարգավորման միջնորդությունը ստանձնած պետությունների վարքի համարժեք ըմբռնան բանալին:

Առաջին եզրակացությունը, որին մեզ մղում է Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գրեթե 25-ամյա փորձը, այն է, որ համանախագահող երկրները կարգավորվող կոնֆլիկտի հարցում միասնական շահեր ու նպատակներ չունեն: Եթե այդպես չլիներ, բանակցությունները տեղում չէին դոփի, և արդեն վաղուց լուծում գտած կլիներ մի հակամարտություն, որը արդար ու իրավական կարգավորման շատ հիմքեր ունի: Բանակցային գործընթացից երևում է միջնորդների կողմից որդեգրած մարտավարությունը՝ ամեն մեկը (և առաջին հերթին ԱՄՆ-ը և Ռուսաստանը) լռելյան համաձայնությամբ ձգձգում է հակամարտության հանգուցալուծումը՝ սպասելով այն պահին, երբ տարածաշրջանում ուժերի հարաբերակցությունը կփոխվի այնպես, որ հնարավոր կլինի առանց մեծ ջանքերի իր օգտին լուծել խնդիրը:

Դա վերաբերում է ոչ միայն Ղարաբաղյան հակամարտությանը, այլև "ղարաբաղյան" տիպի բոլոր այն հակամարտություններին, որոնց շուրջ առկա է աշխարհաքաղաքական հավասարակշռություն և որտեղ գլոբալ դերակատարները չնայած շահերի անհամատեղելիությանը անմիջական կոնֆլիկտի մեջ չեն մտնում՝ սպասելով **X** ժամին: Իսկ մինչ այդ, երբ "ձայնը տրված չէ հրանոթներին ու տանկերին", որոնք ուժի փաստարկից բացի մնացած բոլոր փաստարկները դուրս են մղում օրակարգից, միջնորդների կողմից արված առաջարկությունները պետք գրվեն պատմությանը և մանավանդ իրավունքին արված հղումներով: Բայց դրանք արվում են հատուկ ձևով, այնպես, որ դրանցից չբխի հիմնախնդրի միանշանակ լուծում: Այդ նպատակով որպես քաղաքական քող

[1] Եթե նույնիսկ ընդունենք, որ ապօրինի այդ որոշումը օժտված է իրավազորությամբ, ապա պիտի փաստենք նաև, որ ինչպես նախորդ բոլոր դեպքերում, այդ փաստաթղթում ևս քննարկվել է ողջ Լեռնային Ղարաբաղի, այլ ոչ թե նրա մի մասի կարգավիճակի հարցը:

1923 թ. հուլիսին, չստանալով Խորհրդային Հայաստանի կազմից Խորհրդային Ադրբեջանի կազմ տեղափոխելու մասին Կովբյուրոյի "որոշման" հետ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի համաձայնությունը և խախտելով չընդունված, բայց Մոսկվայի կողմից բռնությամբ գործողության մեջ դրված այդ վճիռը, Բաքուն Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը դեկրետով հիմնել է Արցախի (Լեռնային Ղարաբաղի) մի մասի վրա, ըստ էության նրա մեկ քառորդի վրա, նրա սահմաններից դուրս թողնելով Լեռնային Ղարաբաղի հյուսիսային, արևմտյան ու հարավային շրջանները: 1991-1994 թթ. ընթացքում իրեն պարտադրված պատերազմի ընթացքում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ազատագրել է լոկ մի մասը այն տարածքների, որոնք պետք Ինքնավար մարզի սահմաններում լինեին: Լեռնային Ղարաբաղի կենտրոնական ու հյուսիսային շրջանները, որ ցեղասպանական ակտերով հայաթափվել են 1988-1992 թվականներին, մնում են բռնազավթված Բաքվի կողմից:

հնչեղություն է տրվում “Այս կոնֆլիկտի մեջ հաղթողներ ու պարտվողներ չպետք է լինեն” կամ “Երկու կողմերի համար էլ հանգուցալուծումը ընդունելի պիտի լինի և ենթադրում է փոխզիջումներ” կամ վերջապես “Կոնֆլիկտը պետք է լուծվի միայն խաղաղ միջոցներով” կարգախոսերին: Հասկանալի է դառնում, թե ինչու անկախ այն բանից, թե ով է հակամարտության կարգավորման վերաբերյալ հեղինակում Մինսկի խմբի անունից կողմերին տրվող առաջարկությունը, դա արվում է հանգուցալուծման հետաձգման նպատակադրությամբ, և մյուս համանախագահները դա հասկանում են առանց խոսքի: Բավական է համեմատել այսպես կոչված *մադրիդյան* ու *կազանյան* առաջարկությունների տեքստերը, համոզվելու համար, որ ձևակերպումների ու բառազգեստների տարբերություններով հանդերձ հակամարտության կարգավորման սկզբունքների մասին Բաքվի կողմից մերժված *կազանյան փաստաթուղթը* ըստ էության նույն *մադրիդյանն* է, այդ թվում և պատմության ու իրավունքի նկատմամբ դրանց դիրքորոշմամբ[1]:

Ղարաբաղյան տիպի հակամարտություններում, որոնց շուրջ աշխարհաքաղաքական հավասարակշռություն գոյություն ունի և որոնց կապակցությամբ գլոբալ դերակատարները չեն մտնում բաց առճակատման մեջ, պատմությանն ու իրավունքին դիմելը դառնում է անխուսափելի պարզ այն պատճառով, որ այլ լեզու չի մնում կոնֆլիկտը ինչ-որ կերպ ներկայացնելու և նրա հանգուցալուծման հետաձգման համար: Ակնհայտ է, որ այդ իրավիճակը կտևի այնքան, որքան կպահպանվի հիմնախնդրի շուրջ նշված հավասարակշռությունը: Այդ պայմաններում պատմությունն ու իրավունքը այս կամ այն կերպ (բայց որպես կանոն խեղված ձևով) դառնում են բանակցային գործընթացի մասնակիցներ ու գործոններ: Այս տրամաբանությամբ է Ջեյմս Ուորլիկը մեզ առաջարկում վերադառնալ մի անցյալ, որից հրաժարվել է ինքը Բաքուն, մի անցյալ, որ կապված է Խորհրդային Միության հետ և որտեղ վերադառնալ այլևս անհնար է: Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը սոսկ Խորհրդային Ադրբեջանի կազմում հիմնված ազգային վարչաքաղաքական միավոր չի եղել: Այն ԽՍՀՄ ազգային-պետական կառույցի սուբյեկտ է եղել՝ ներկայացված նրա բարձրագույն օրենսդիր մարմնում: Մերօրյա Ադրբեջանական Հանրապետության կազմում այդ կարգավիճակը վերականգնել սկզբունքորեն անհնար է: Ահա թե ինչու մարզի սահմաններին վերադառնալը վերադարձ չի կարող ապահովել քաղաքական այն կարգավիճակին, որ ունեցել է մարզը ԽՍՀՄ գոյության տարիներին: Ինչպես տեսնում ենք, պատմությունը այսպես թե այնպես ներգրավված է հակամարտության կարգավորման գործընթաց, բայց հիմնախնդրից կտրված, անառարկայական ձևով: Նույն կերպ միջազգային իրավունքն է ներգրավված բանակցային գործընթացում: Մինսկի խումբը հակամարտության հիմքում դնում է միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքները, բայց միջնորդական առաջարկություններում դրանք (խոսքը տարածքային ամբողջականության սկզբունքի և ժողովուրդների ազատ ինքնորոշման միջազգային իրավական նորմի մասին է) մնում են օդից կախված և չեն կապվում խնդրին վերաբերվող պատմական ու իրավական այն փաստեր հետ, որոնք տանում են կոնֆլիկտի արդար լուծմանը[2]:

Բանակցություններում գործնականորեն ստացվում է հետևյալ իրավիճակը: Պատմության անունը բաց տեքստով չի տրվում, բայց անուղակի ու անբացահայտ ձևերով այն ներբերվում է հակամարտության կարգավորման գործընթաց: Միայն թե ներբերվում է ոչ թե իրական այլ կեղծված կամ նույնիսկ գոյություն չունեցած պատմություն: Ստատուս-քվոից նահանջելու համանախագահների կոչերը. որ հատկապես հաճախակի են բարձրաձայնվում ԱՄՆ-ը ներկայացնող Ջեյմս Ուորլիկի կողմից, դեպի անհայտ պատմություն նահանջելու առաջարկություններ են[3]: Նույն կերպ միջնորդները դիմում են իրավունքին, իրավական փաթեթի փոխարեն դիմելով “կիսաբաց թողնված” ստվերային իրավական փաթեթին (միջնորդները “կես բերան ասված” իրավական փաստարկները չեն ծավալում, չեն բացորոշում, քանի որ դրանք տրամաբանորեն կտանեն դեպի իրական իրավական փաթեթը):

Հայկական կողմերի համար անելիքները ոչ միայն դիվանագիտական, այլև տեղեկատվական գործունեության դաշտում են: Միջազգայնորեն ընդունված պատմական ու իրավական փաստերը բոլոր հիմքերն է տրամադրում կոնֆլիկտի արդարացի լուծման համար: Հակամարտության կերպարում դրանց ներդրումը իմ տեսակետից մեզնից պահանջում է հատուկ հմտություններ ու հնարքներ, որոնց մենք լավ չենք տիրապետում: Դրա համար էլ մենք հայտնվել ենք պատմականորեն, իրավաբանորեն և փաստորեն մեր իսկ տարածքների զավթիչի դերում:

---

[1] Բանակցային գործընթացում ներգրավված ՀՀ պատասխանատու շրջանակները տվել էին դրանց հիման վրա ապագա բանակցությունները շարունակելու իրենց համաձայնությունը՝ կանխապես համոզված լինելով, որ ողջ Լեռնային Ղարաբաղը վերազավթելու մարմաջով տառապող Բաքուն չի դնի իր ստորագրությունը դրանց տակ: Ճիշտ է, միջազգային իրավունքի տեսակետից անհասկանալի է մնում, թե ինչու պիտի Հայաստանի Հանրապետությունը իր ստորագրությունը դնի իրեն չպատկանող տարածքները Բաքվին “վերադարձնելու” մասին փաստաթղթի տակ, երբ այդ տարածքներն ունեն իրենց իրական տերը թե պատմության, թե իրավունքի, թե առկա փաստի իմաստներով:

[2] Այդ մասին տես՝ ՍՏՈՒԳԵՆՔ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՄԵՐ ԶԻՆԱՆՈՑԸ (զրույց-4) ԿԱՄ ԻՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱԼ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՍԽԱԼ ԲԱՆԵՐ ՉԱՍԵԼՈՒ ՀԱՄԱՐ (http://ditaket.info/%D5%8D%D5%8F%D5%88%D5%92%D4%B3%D4%B5%D5%86%D5%94-%D5%8F%D4%B5%D5%82%D4%B5%D4%BF%D4%B1%D5%8F%D5%8E%D4%B1%D4%BF%D4%B1%D5%86-%D5%84%D4%B5%D5%90-%D4%B6%D4%BB%D5%86%D4%B1%D5%86%D5%88%D5%91%D4%B8-%D4%BF/)

[3] Ստատուս-քվոյից նահանջելու Ուորլիկի համառ պահանջները, որ կրկնվում են նաև քառօրյա պատերազմից հետո, երբ այդ ստատուս-քվոն փաստորեն խախտվել է, կարող է ստանալ այլ մի մեկնաբանություն: Ոչ ոք չի կարող բացառել, որ այդ հայտարարություններով նա դրդում է հայկական կողմերին բարձրաձայնել այն փաստերի մասին, որոնք բացահայտում են ստատուս-քվոյից նահանջելու իրավական ու քաղաքական անհեթեթությունը, այն փաստերի մասին, որոնց մասին խոսվեց վերը: Բոլոր դեպքերում նրա հայտարարությունների ենթատեքստում մնացող հնարավոր այդ նպատակադրության մասին միտքը հայկական կողմերը պետք է շրջանառության մեջ դնեն:

Հակամարտության պատմահիրավական ու քաղաքական այնպիսի կերպարի ներդրումը միջազգային հանրային գիտակցության մեջ, որը կհամապատասխանի նրա իրական բնույթին, այսօր այն գերխնդիրն է, որ ծառացած է ողջ հայության ու արդարության ու ճշմարտության իդեալներին հավատարիմ գիտական շրջանակների առջև:

ՀՏԴ 327(479.25+479.243) *Քաղաքագիտություն*

Արման Նավասարդյան
Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի
համաշխարհային քաղաքականության և
միջազգային հարաբերությունների ամբիոնի վարիչ,
արտակարգ և լիազոր դեսպան

ՀՀ և ԼՂՀ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ և ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՆԵՐԿԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Խորը գլոբալիզացիայի և ինտեգրացիայի պայմաններում ՀՀ և ԼՂՀ դիվանագիտությունը կարող է զարգանալ դասական դիվանագիտության հարուստ փորձի վրա, որի մեջ հատուկ տեղ են գրավում մաքիավելիզմը և չինական ստրատագեմաները:

Դրա հետ մեկտեղ XXI դարում մեծապես փոխվում է դիվանագիտության առանձնահատկությունները: Դասական դիվանագիտության կողքին հայտնվում է ժողովրդական դիվանագիտությունը, որի բազմաթիվ բաղադրիչները անվանվում են «փափուկ ուժ»:

ՀՀ և ԼՂՀ-ի դիվանագիտական զինանոցում առկա են «փափուկ ուժի» դիվանագիտության բազմաթիվ սեգմենտներ, որոնց ճիշտ և հմուտ օգտագործումը «խելացի» և «կոշտ» ուժերի համադրումով կարող են կարևոր նշանակություն ունենալ նրանց ներքին և արտաքին խնդիրների հաջող լուծման համար, նպաստել իրենց օգտին դարաբաղյան խնդրի կարգավորմանմ գործընթացին:

Հայկական երկու պետությունների դիվանագիտական ծառայությունները պետք է օգտվեն դիվանագիտական արվեստի այնպիսի փորձված միջոցներից, ինչպիսիք են «մաքոքային դիվանագիտությունը», պետությունների միջև միջնորդային դերակատորությունը, հակառակորդի ճամբարում գոյություն ունեցող հակասությունների վրա խաղալը և այլն:

Բանալի բառեր՝ Խաղաղությունն այլընտրանք չունի, մաքիավելիզմ, չինական ստրատագեմա, ժողովրդական դիվանագիտություն, «փափուկ ուժ», «խելացի ուժ», «կատալիզատորային դիվանագիտություն», «մաքոքային դիվանագիտություն», ազգային փոքրամասնության «պարտադրված անջատում»:

Арман Навасардян
Зав. кафедры международных отношений

ДИПЛОМАТИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ АРМЕНИИ И НКР В СОВРЕМЕННЫХ МЕЖДУНАРОДНЫХ ОТНОШЕНИЯХ

В условиях глобализации и интеграции дипломатия Республики Армения и Нагорно-Карабахской Республики может развиваться на основе богатого опыта классической дипломатии, где особое место занимают макиавеллизм и китайские стратагемы.

Вместе с тем в XXI веке особенности дипломатии во многом меняются. Рядом с классической дипломатией появляется народная, многочисленные компоненты которой именуют «мягкой силой».

В дипломатическом арсенале РА и НКР – масса сегментов дипломатии «мягкой силы», умелое и грамотное использование которых в синтезе с «разумной» и «жесткой» силой может сыграть важную роль в решении внутренних и внешних проблем, способствовать урегулированию карабахской проблемы в их пользу.

Дипломатические службы обоих армянских государств должны пользоваться также такими испытанными средствами дипломатического искусства, как «челночная дипломатия», посредничество между государствами, игра на противоречиях, существующих в стане противника и т.д.

Ключевые слова - Миру нет альтернативы, макиавеллизм, китайская стратагема, народная дипломатия, «мягкая сила», «разумная сила», «катализаторная дипломатия», «челночная дипломатия», «вынужденное отделение» национального меньшинства.

Arman Navasardyan,
Head of Department of International Politics
and International Relations
Russian-Armenian (Slavonic) University

ARMENIAN AND NKR PROBLEMS OF FOREIGN POLICY AND DIPLOMACY IN PRESENT INTERNATOINAL RELATIONS